Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 300 - Ա
որոշման

«ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԱՌԱՐԱՆԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կենցաղային պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է ձեռք բերել բժշկական թափոնների վառարան և տեղափոխել այն վերոնշյալ հիվանդանոց: Այժմ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվում են հիվանդանոցի վիրաբուժական մասնաշենքի հիմնանորոգման և կից վիրա-հատարանի կառուցման աշխատանքները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք, առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	15,300,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Բերդի Բժշկական Կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն, Հայաստան, Տավուշ, Բերդ, Ա. Մանուկյան փողոց 25 շենք, ՀՎՀՀ՝ 07806692

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի մայիսի 26-ից մինչեւ 2025 թվականի դեկտեմբերի 1-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի «Բերդի Բժշկական Կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար նախատեսվում է ձեռք բերել և մատակարարել բժշկական թափոնների վառարան: Իրականացվելու է 2025 թվականի մայիսի 26-ից մինչև 2025 դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ 15,300,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի «Բերդի Բժշկական Կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար բշժկական վառարանի ձեռքբերում և մատակարարում՝ 15,300,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

14.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ